ՈՐՈՇ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ
(Մաս I. Հանդերձանք)

Ժամանակակից պատերազմը բավականին դաժան գործողություն է, որտեղ չկան կանոններ և զերզգայություններ։ Բայց եթե արդեն մասնակցում եք, ապա պատրաստ եղեք, որ ստիպված եք լինելու մոբիլիզացնել ամբողջ ուժերը։

Առաջին մասում թվարկվելու է այն անհրաժեշտ հանդերձանքը, որը տարանջատված է ըստ շարակարգերի։ Այստեղ արժե հաշվի առնել, որ դրանք կարող են փոփոխվել՝ կախված տարվա եղանակից, մարտիկի մասնագիտությունից (ինչպես նաև կիրառման տարածքից), և, հետևաբար, մարտիկը պետք է ինքնուրույն որոշի, թե ինչն է իրեն անհրաժեշտ կամ ավելորդ։

Մենք բոլորս գիտենք, որ հանդերձանքը էժան չէ և ունի իր սեփական ռեսուրսը (պարբերաբար պետք է փոխարինվի և թարմացվի), ուստի խորհուրդ է տրվում գնել ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար։ Մարդիկ, ովքեր սիրում են խնայել, պետք է հիշեն, որ «Ժլատը վճարում է երկու անգամ, հիմարը՝ երեք, իսկ լոխը (лох) միշտ է վճարում», և որպեսզի ժլատի տեղում չլինեք, արժե գնել բարձրորակ հանդերձանք, հակառակ դեպքում կարող եք վերածվել լոխի և մի օր վճարել կյանքով։

Երկրորդ մասը նվիրված կլինի ջոկի մարտակարգի վերաբեյալ խորհուրդներին, երրորդը՝ մարտի դաշտում տեղաշարժմանն ու «զույգով» աշխատանքին, չորրորդը՝ հարձակմանն ու պաշտպանությանը, և վերջում խորհուրդներ կտանք հակառակորդի հանկարծակի կրակի տակ հայտվելու գործողությունների վերաբերյալ։

ԱՌԱՋԻՆ ՇԱՐԱԿԱՐԳ: ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Սա ընդհանուր նշանակության միջոցների հավաքածու է, որը մշտապես գտնվում է մարտիկի վրա առաջադրանքի կատարման ամբողջ ժամանակահատվածում և ներառում է հակառակորդի թիկունքում գոյատևման ապահովման նվազագույն միջոցներն ու ապահովում է առաջադրանքի կատարումը: Շարակարգը տեղավորված է բեռնաթափման ժիլետում (համակարգում), զինծառայողի հագուստի գրպաններում: Այս հավաքածուի մեջ խորհուրդ է տրվում ներառել.

1. անձնական հրազեն և սառը զենք, զինամթերքի կեսը, ինժեներական զինամթերք և հատուկ միջոցներ, որոնք անհրաժեշտ են հակառակորդի հետ հանկարծակի հանդիպման և հետապնդումից կտրվելու դեպքում կարճատև մարտ վարելու համար,
2. կապի և ազդանշանային անհատական միջոցներ,
3. առաջին օգնության բժշկական միջոցներ,
4. անձեռնմխելի պաշար (ԱՊ) - զինամթերքի չորրորդ մասը, միջոցների, գործիքների և պատրաստուկների պաշար, որոնք թույլ կտան ստեղծել գոյատևման համար նվազագույն անհրաժեշտ պայմաններ ՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի ազդեցությունը, բարձր կալորիականությամբ, օգտագործման համար պատրաստի (պահածոյացված կամ սառեցված) փոքր չափի արտադրանք և խմելու ջուր:



ԵՐԿՐՈՐԴ ՇԱՐԱԿԱՐԳ: ՕՊՏԻՄԱԼ ԲԱՎԱՐԱՐ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Սա ընդհանուր նպատակների և որոշակի առաջադրանքի կատարման միջոցների մի շարք է այն չափով, որն ապահովում է օբյեկտի վրա անմիջական ազդեցություն, առնվազն մեկ տարբերակով, ինչպես նաև կենսապահովման նվազագույն մակարդակը օբյեկտի վրա անմիջական նախապատրաստման և ազդեցության ընթացքում: Այս նպատակների իրականացման համար կիրառելի է հետևյալ միջոցը. շարակարգը տեղադրված է փոխադրող-բեռնաթափող ժիլետի նվազագույն հասանելիության գոտում (մարմնի հետևի մակերեսի վերին մասում)՝ մարտական ուսապարկում, որտեղ խորհուրդ է տրվում ներառել.

5. անձնական զենքի զինամթերքի երկրորդ կեսը, գիշերային տեսանելիության սարքերը, խմբակային զենքն ու զինամթերքը,

6. սնունդ մեկ-երկու օրվա համար,

7. կենսագործունեության ապահովման միջոցները (ջրամեկուսիչ թիկնոց, ջերմամեկուսիչ գորգ (նստատեղ), ջրի մաքրման ֆիլտր և այլն),

8. ինժեներական զինամթերքը և քողարկման անհատական միջոցները:

ԵՐՐՈՐԴ ՇԱՐԱԿԱՐԳ: ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՎԱՔԱԾՈՒ

Առաջարկվող տարբերակը նախատեսված է մարտական առաջադրանքի կատարման համակողմանի ապահովման և առաջադրանքների կատարման ամբողջ ընթացքում ինքնավար ռեժիմում մարտունակության պահպանման համար: Երրորդ շարակարգը տեղադրվում է երթային ուսապարկում և լրացուցիչ փոխադրող միջոցներում : Այն ներառում է.

9. լրացուցիչ զինամթերք անձնական և խմբային զենքի համար,

10. կապի պահուստային միջոցներ,

11. ճամբարային սարքավորումներ (վրան, սպասք, վառելիքի պաշարով ջեռուցման և լուսավորող սարքեր, քնապարկ և այլն),

12. սպիտակեղենի փոխարինող հավաքածու, անձնական խնամքի միջոցներ,

13. սննդամթերքի պաշար առաջադրանքի ամբողջ ժամանակահատվածի համար,

14. խնդիրների լուծման համար անհրաժեշտ օժանդակ (ապահովող) այլ միջոցներ:

Աղբյուրը. https://vk.com/wall-127249967_19094?ysclid=m9enjnjuuy803997394